

ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ԱԹԽԱՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՏԵՐԻ.

(Շարունակություն) *

Գ.

ՀԵՐԱԿԼԻ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ
և

ՊԱՏԵՐԱԶՄ ԻՍԼԱՄԻ ԴԷՄ.

Յուստինիանի եղբորորդու հրաժարականից ի վեր կայսերական ծիրանին հազել էին բացառապես զօրապետներ և զինուորներ։ Հերակլն էլ նմանապես զինուորական էր. բայց նա ծագում էր մի այնպիսի ընտանիքից, որ երկու սերունդից սկսած վարել էր քաղաքական և զինուորական բարձր պաշտոններ։ Սա նախասահմանում էր իշխան լինելու և առանձին բախտ ունեցաւ հիմնադիր լինելու մի նոր ծաղկեալ հարստութեան, որ յաջորդաբար հինգ սերունդ տեւեց։ Տէրութեան ղեկը գտնւում էր մի հանձարեղ զօրապետի և խոհական կարգադրիչի ու քաղաքագետի ձեռին։ Բայց զրութիւնը համարեա թէ յուսահատական էր։ Եւրոպան կողոպտում էին Ավարները և Սլաւները. Ասիայում ասպատակում էին Պարսիկները. բոլոր ամուր քաղաքները զոգում էին նոցա առաջ։ Նոքա անցան Նիքաոսը։ Հռովմայեցիների դէմ 611 թ. տարած մեծ յաղթութիւնից յետոյ, նոցա իշխանութեան ներքոյ ընկան Անտիոքը, Ապամեան, Էմեսան և Կապադովկիայի Կեսարիան։ Կայսեր փորձերը խաղաղութիւն հաստատելու, անյաջող անցան. Մոսորովը յոյս ունէր վերջնականապէս նուաձել Հռովմայեցւոց պետութիւնը և հետեւեալ տարիների պատահարները կարծես արդարացնում էին նրան։ 613 թ. Պարսից Շահարազ զօրապետը առաւ Դամասկոսը, 614 թ. անցաւ Յորդանանը և զրուեց Երուսաղէմը։ Սուրբ քաղաքը մոխրակոյտ դարձին, բնակիչներին կոտորեցին կամ տեղափոխեցին Պարսկաստան։

Նմանապէս Զաքարիա պատրիարքին և «կենաց փայտը» Սուրբ Խաչը, տարան Տիգրոն քաղաքը։ Այս պատահարը առաջ բերաւ ահագին յուզմունք։ Հաւատոյ նշանի կորուստը բոլոր քրիստոնեաների կողմից, նաեւ հռովմական պետութեան սահմաններից դուրս, նկատուեց իրրեւ անսահման զժբախտութիւն՝ մանաւանդ Փրանկների բարեպաշտ ժողովրդի կողմից։ Գոնէ պատրիկիոս Նիկեա տաք կարողացել էր միայն աղաատել ու Սպունդը և ու Գեղարդը և բերել մայրաքաղաք։ Շահինը՝ Պարսից երկրորդ զօրապետը, 615 թ. արշաւեց մինչև Բաղկեղոն։ Թէև հռովմական Փիլիպպիկոս զօրավարի յարձակմունքը Հայաստանի վրայ ստիպեց նրան առժամանակ յետ խաղալ սակայն 619 թ. Պարսիկները տիրեցին Անկիւրիային և զրանով իշխում էին հաղորդակցութեան այն զճերի վրայ, որոնք միացնում էին մայրաքաղաքը Ասորիքի և Ասիայի հետ։ Նոյն տարին Պարսից իշխանութեան ներքոյ ընկաւ Եգիպտոսը իւր Աղեքսանդրիա գլխաւոր քաղաքով, որ այնքան անհրաժեշտ էր մայրաքաղաքին ուստեսաի պաշար հայթայթելու։

Հասկանալի է, որ կայսրը, յուսահատական գրգռման մէջ, որտեց Ափրիկա փախչելով աղաատելու, Բայց պետական խորհրդի մեծամեծները և ամենից առաջ թէ աղգասէր և թէ քաղաքագէտ Սերգիոս պատրիարքը նրան յետ պահեցին։ Չափն անցած քաղաքական զժբախտութիւնը առաջ բերեց, ինչպէս 1806 թ. Գերմանիայում բարոյական և քաղաքական հիմնական յեղաշրջութիւն։ Հերակլը հետեւեալ տարիները դործ դրեց զօրքը լրացնելու և վարժեցնելու, որ Զինոնի ժամանակ համարեա թէ բոլորովին քայքայուել և ոչնչացել էր։

Երբ նա մայրաքաղաքում հաստատեց խնամակալութիւն, որի անդամներն էին իւր անչափահաս և կայսերակից որդի Կոստանդինը, պատրիարքի և Բոնոս պատրիկիոսի ղեկավարութեամբ, 622 թ. զարնանը դուրս գնաց Պարսից դէմ։ Կայսեր արշաւանքները ունէին բացարձակապէս խաչակրաց արշաւանքների բընաւորութիւն։ Նոքա ուղղում էին ու քաղաքը կործանողի և ու խաչ յափշտակողի դէմ։ Ինչպէս որ իւր նաւատորմի նաւերը

* Տես. «Արարատ» 1897. թ. մԱ և մԲ. հր. 503.

որոնցով նա առաւելոստանդնուպօլիսը՝ զարգարուած էին Աստուածածնի պատկերով ալժամ ևս զօրքերն ու իրենց առաջնորդները հաւատում էին որ զանուամ են Ամենապրկչի աներկիւյս պաշտպանութեան տակ։ Հերակլը արդէն հասել էր Պարսից սահմաններին և երբ Աւարները արշաւանքը ստիպեց նրան յետ դառնալ։ Աւելի նշանաւոր էր երկրորդ՝ 624 թ. սկսած արշաւանքը։ Կայսրը յաղթանակով հայաստանի միջով հասաւ մինչև Արաքստափան և այստեղ նա ջարդեց իրան Պարսից թագաւորին և կործանեց — դրանով արդէն որոշուում է պատերազմը իրեն կրօնական պատերազմ — նոցա մեծահաշակ կրակատունը Դանապուրի։ Բայց նա ստիպուած էր թողնել իւր մտադրութիւնը՝ մեղական կիրճերով մանել բուն Պարսկաստանը։ որովհետեւ Շահարապը Փոքր Ասիայից և Շահինը նորակալժ զօրքով գալիս էին նրա դէմ։ Նա քաշուեց դէպի հիւսիսային երկիրները և դաշնակցութիւն հաստատեց Լաղերի և Լրացուց և Արխանդների հետ։ որոնք կանոնաւոր և ճիշդ վարձ ստանալով զինուորներ էին տալիս որ շատ յաջողակ էին ամեն տեսակ զործերում։ 625 թ. նրա դէմ դուրս եկաւ Պարսից մի երրորդ բանակ Շահարապականի առաջնորդութեամբ։ Հերակլը ստիպուած էր հիւսիս հոնքի երկիրը քաշուել։ Այստեղից նա մտաւ Պարսից մասի հայաստանը և ձմեռուայ սկզբին Շահարապին փառաւոր ջարդ տուեց։ Բայց յաղթութիւնից չկարողացաւ օգտուել։ Ընդհակառակը նա իւր յոգնած զօրքով ծաւրոսի վրայով և Ասորիքով յետ նահանջեց Փոքր Ասիա և Պարսիկները չկարողացան նրան արգելք լինել։

Ամառը 626 թ. հանդիպում ենք կայսեր արդէն նրա երրորդ արշաւանքի ժամանակ։ Լաղիկայի մօտ։ Նա յաջողիկ էր Պարսիկների դէմ զրաւելու յաջողութեան հզօր իշխանին որոնք բնակւում էին ուստական-գիրգիղեան տափաստաններում։ Սակայն առանց հետեանքի մնաց և երբ միացեալ ոյժով պաշարեցին Թիֆլիզը՝ հեռեկալ տարին վերջապէս տաժանկի յառաջխաղումից յետոյ՝ ձմեռուայ կիսին (12 Դեկ. 627) Նինուէի մօտ տեղի ունեցաւ վճռողական մեծ ճակատը որով Պարսից զօրքը խորտակուեց։ Դրանից անմիջապէս յետոյ կողոպտեցին և

կործանեցին միշտը թագաւորական դպեակներ և որոնց մէջ էր Սոսրովի կայանը՝ Դաստակերտը և աղատեցին շատ քրիստոնեաների։ Անհար էր Տիգրանի վրայ յարձակուել որովհետեւ Պարսիկները Նահապանի բոլոր կամուրջները կործանել էին և միւս կողմում պատրաստի սպասում էին։ Հերակլը յետ խաղաց բաւական վտանգաւոր ճանապարհներով՝ մեղական լեռնոտ երկիրներով։ Յաջողութեամբ հասաւ տէրութեան սահմանը։ անցաւ Փոքր Ասիայի միջով և ժողովրդի անսահման ցնծութեամբ յաղթանակով կայսրը մտաւ իւր մայրաքաղաքը։ Դարձի ժամանակ ճանապարհին նրան արդէն լուր էր հասել Պարսից թագաւորի հետ պատահած աղետի մասին (25 Փետր. 628 թ.)։ Նրա որդի Շիրոն խաղաղութիւն խնդրեց և նրան տուին զինադադար։ Պարսկական զինքը դուրս եկան հռովմէական նահանգներէն և Հերակլը մի կերպ վերահաստատեց կարգը։ 629 թ. Շահարապը ամենից վերջը յետ քաշուեցաւ Եգիպտոսից։ Նոյն տարին ս. Յուլի կրկին Նրուսարէմ ուղարկուեց։ Կայսրը ինքը բոլոր հոգեւորականութեան հետ ժողովրդի ցնծութեամբ յաջը նորից կանգնեցրեց (629 թ. 14-ն Սեպտ.) և այն ժամանակից սկսած եկեղեցին հանգիստաւոր կերպով ամեն տարի տօնում է Յուլիերացի յիշատակի օրը։ Հերակլ կայսեր այդ զործը բոլոր քրիստոնեաների վրայ մնայուն տպաւորութիւն թողեց որը յետոյ ամբողջ դարեր անջնջելի է մընացել։ Նրեւում է որ հեռեկալ տարին Պարսիկների հետ հաստատուել է կանոնաւոր խաղաղութիւն։

Հերակլը կանգնած էր իւր փառքի գաղթանակին։ Պարսից թագաւորութիւնը գահակալական անընդհատ յիշատիւն թիւններով տակն ու վրայ եղաւ և թուլացաւ և այսպիսով կարծես թէ արեւելքի վտանգը ոչնչացաւ ընդմիշտ։

Մինչդեռ այդպիսով տէրութեան ամբողջ ոյժը կենդրոնացրած էր արեւելքում երկրի վիճակը կանոնաւորելու արեւմուտքում անփոխաւրկնելի կորուստներ եղան։ 619 թ. Վեստգոթների Սիսերուս թագաւորի ձեռքն էին ընկել Յունաց ձեռքում եղող Սպանիայի քաղաքները և նրա յաջորդ Սվինթիւսն (621—

631) վերջնականապէս մաքրեց հռովմէական տէրութեան մնացորդները Պիրինէյեան թերակղզու վրայից: Նոյնպէս ստիպուած էին Հերակլի ժամանակ անդառնալի կորած համարել Դանուբի գիծը, որ Մաւրիկիոսի ժամանակ մեծ դժուարութեամբ պահպանել էին: Հեմուսի և Դանուբի միջի տարածութիւնը վաղուց արդէն ողողել էին սլաւոնական զաղթականները: Յետագայ ժամանակագրութիւնը պատմում է, թէ Սերբերը և Կրովականները Հերակլի ժամանակ արդէն բռնել էին իրենց պատմական բնակավայրերը, և նրանով են իրենց միախառնում, որ իրր թէ այդ ցեղերը բռնել էին այդ երկիրները կայսեր հաւանութեամբ՝ Աւարների դէմ՝ կռուելու: Իրապէս բոլորովին զրա հակառակն է ուղիղ: Հռովմայեցիները դժուարութեամբ էին պաշտպանում Դաղմատիայի ծովային քաղաքները: Աւելի երկիւղալի էր վրտանգը Ավարների կողմից: 623 թ. նոքա ներս խուժեցին մինչև մայրաքաղաքի մօտերը, և կռավարութիւնը կարողացաւ խաղաղութիւն գնել միայն չափից դուրս մեծ հարկի վճարումով: Միաժամանակ Սլաւները շարունակում էին աւելի մեծ թուով մտնել Էւրոպական նահանգները: Նոցա թեթեւ մակոյկները կողոպտելով 623-ին հասան մինչև Կրետէ: Դեռ աւելի սարսափելի էր 626 թ. Յուլ. 29-ի յարձակումը: Ավարները և Սլաւները ծովի և ցամաքի կողմից ճնշում էին մայրաքաղաքը՝ մինչդեռ միաժամանակ Շահբարազը Պարսից զօրքով կանգնած էր ասիական ափի՝ Բաղկեդոնի մօտ: Բայց քաջամարտիկ բերդապահ զօրքը յետ մղեց բոլոր յարձակումները: Օգոստոսին Ավարները և Սլաւները ստիպուած էին յետ խաղալ:

Ուժերի այս վերջին զօրեղ լարումից յետոյ, Ավարները այլ ևս տէրութեան համար վտանգ չէին ներկայացնում: Սլաւոնական ցեղերը յետագայ տանտամաններում ևս շարունակում են իրենց զաղթական հոսանքը դէպի Հեմուս թերակղզին: որ սկսել էին Մաւրիկիոսի ժամանակ, նոքա խիտ խմբերով բնակութիւն են հաստատում Միսիայում, Մակեդոնիայում, Հելլասում և Պելոպոնէսում: Ուրաւ Ալտայեան Բերդները, որ շատ շուտ են յիշուում Դանուբի ժողովուրդների մէջ, նշանա-

ւոր դեր էին խաղում արդէն, երբ առաջին անգամ հանգիս են զալիս: Հերակլը արեւելքի վիճակի մէջ կարգ հաստատելուց յետոյ, 635 թ. նոցա իշխան Կուվրազի հետ դաշն կապեց, որպէսզի նրան զինի Սլաւների և Ավարների դէմ: Կուվրազը բաւական չափով արգարացրեց իւր վրայ դրած յոյսերը, և շնորհակալ կայսրը նրան առաւ պատրիկիոս տիտղոսը: Այժմ Ավարները սահմանափակուած մնացին Պանոնիայի իրենց բնակավայրերում:

ՄԵՍՐՈՒՄ ՎԱՐՈՒՄ:

(Կր շարունակուի)



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅ և ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Մի անգամ կարգինալ Մանինգը ասել է. «Սովեաններին կերակրելու պարտաւորութիւնը ծագում է ամենայն մարդու ապրելու բնական իրաւունքից»: Եւ տարակրօս չկայ, որ այդպիսի պարտականութիւն կայ հասարակութեան և քաղաքական իշխանութեան վերայ, որը միշտ բաւարար կերպով չի կատարուել: Մինչ ցայսօր տակաւին չի գտնուած մի այնպիսի տնօրինութիւն, որով հնար լինէր ապահովացնել իւրաքանչիւր անհատի համար հանապազօրեայ հացը:

Այս տեսակէտից անցնալ ժամանակների հանդամանքները կարծես թէ աւելի յաջողակ էին: Մեր յառաջագէմ քաղաքակրթութեան շնորհիւ է, որ այսօր մեծամեծ պալատների կշտին՝ սովից տանջուող մարդիկ տարեցտարի բազմանում են: Պատմութիւնից միայն երկու դէպք է յայտնի, ուր որ ինքը պետութիւնը հոգս է արել ժողովրդեան հացի կարօտը մեծ ծաւալով լցուցանելու համար: Եգիպտոսում հաստատուած կար արքունական մեծ շտեմարան, որտեղից հաց էր մատակարարվում ամբողջ ժողովրդեան: Մատակարարը բարձ ու պատուով մի մեծ պաշտօնեայ էր (եւ բարկացաւ փառան ի վերայ մատակարարին), բայց զերծ չէր նաև արեւելեան պաշտօնէի ամէն վտանգներից (եւ զմատակարարն կախեաց զփայտէ): Հռովմում սնանկութեան հասած պետութիւնը երկրորդ դարու վերջը